Վ. Ի. ԼԵՆԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ
ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Վլադիմիր Իլյիչ Լենինի տեսական և գործնական բազմակողմանի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում սոցիալիստական մշակույթի ստեղծման, մեր երկրում կուլտուրական հեղափոխության իրականացման հետ կապված հարցերը։ Վ. Ի. Լենինը հսկայական ներդրում կատարեց մշակույթի մարքսիստական տեսության զարգացման մեջ։ Նա մշակեց մարքսիզմը հարստացնող մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք նոր աստիճանի բարձրացրին մշակույթի մասին մարքսիստական ուսմունքը։

Զարգացնելով Մարքսի և Էնգելսի դրույթները մշակույթի դասակարգային բովանդակության, հոգևոր կյանքի կոնկրետ երևույթներում առաջադիմական ու հետադիմական միտումներ տարբերելու անհրաժեշտության վերաբերյալ, Վ. Ի. Լենինը 1913 թ. կատարեց տեսական կարևորագույն ընդհանրացում, որը դարձավ դասական բանաձև. «Կա երկու ազգ ժամանակակից յուրաքանչյուր ազգի մեջ... Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»[1]։

Անտագոնիստական հասարակության պայմաններում ազգային մշակույթի սոցիալական երկատվածության դրույթը հանգամանորեն փաստարկված է Վ. Ի. Լենինի «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին», «Թեզիսներ ազգային հարցի մասին», «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին» և այլ աշխատություններում։

«Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան,— գրում էր Լենինը,— թեկուզ չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմանները անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիայի։ Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև սևհարյուրյակային ու կղերական) կուլտուրա—և այն էլ ոչ թե «տարրերի» միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով»[2]։

Այս դրույթը Լենինը պաշտպանեց բուրժուական և մանրբուրժուական տարրեր խմբակցությունների ներկայացուցիչների դեմ մղված պայքարում, որոնք

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 20։
2 Նույն տեղում, էջ 9—10։

յուրաքանչյուր ժողովրդի մշակույթը դիտում էին որպես սոցիալական առումով միասնական, առանձնացած և իր ազգային շրջանակների մեջ մեկուսացած երևույթ։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ազգային մշակույթի սոցիալական միասնության տեսության տակ թաքնված է ազգի ներսում «դասակարգային համերաշխության» գաղափարը, որը բուրժուազիայի ջատագովները օգտագործում էին սոցիալական ընդհարումների կանխման և շահագործող դասակարգերի տիրապետությունը հավերժացնելու նպատակով։ Վ. Ի. Լենինը բացահայտեց ազգային մշակույթի՝ որպես ինչ-որ միասեռ, քարացած, սոցիալական տարբեր միտումների զարգացումից ազատ պատկերացման անհիմն լինելը, ցույց տվեց նոր ծնվող սոցիալիստական մշակույթը գոյություն ունեցող ազգային մշակույթից անկախ դիտելու սխալականությունը։ Կարևոր է նշել, որ բուրժուական մշակույթին Լենինը հակադրում է ոչ միայն սոսկ սոցիալիստական տարրերը, այլ դեմոկրատական ու սոցիալիստական տարրերը իրենց ամբողջականության մեջ։ «...Մենք յուրաքանչյուր ազգային կուլտուրայից վերցնում ենք միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը, վերցնում ենք դրանք միայն և անպայման իբրև հակակշիռ յուրաքանչյուր ազգի բուրժուական կուլտուրայի, բուրժուական նացիոնալիզմի»[3]։ Այս դրույթի մեջ արտահայտված է Լենինի վերաբերմունքը դեպի անցյալի մշակույթը, կուլտուրական ժառանգությունը, որի դեմոկրատական նվաճումները, ինչպես գտնում էր Լենինը, կարող են ծառայել նոր հասարակության շահերին։

Գեղարվեստական ստեղծագործության դասակարգային բնույթի մասին Մարքսի և Էնգելսի դրույթները իրենց հետագա զարգացումը և դասական ընդհանրացումը գտան հոգևոր մշակույթի կուսակցականության վերաբերյալ Լենինի մշակած սկզբունքի մեջ։ Դեռևս իր վաղ շրջանի աշխատություններից մեկում Լենինը գրել է. «...Ոչ մի կենդանի մարդ չի կարող այս կամ այն դասակարգի կողմնակից չդառնալ (բանի որ հասկացել է նրանց փոխհարաբերությունները), չի կարող չուրախանալ տվյալ դասակարգի հաջողությամբ, չի կարող չվշտանալ նրա անհաջողություններով, չի կարող չդայրանալ նրանց վրա, ովքեր թշնամի են այդ դասակարգին, նրանց վրա, ովքեր հետամնաց հայացքներ տարածելով խանգարում են նրա զարգացմանը և այլն, և այլն»[4]։ Այս միտքը ընկած է հոգևոր մշակույթի կուսակցականության սկզբունքի հիմքում, քանի որ անտագոնիստական հասարակության մեջ մշակույթի յուրաքանչյուր գործիչ պիտի պարզի իր դիրքորոշումը, ընտրություն կատարի, կանգնի որևէ դասակարգի կողմը և իր արվեստը ծառայեցնի նրա շահերին։

Հոգևոր մշակույթի կուսակցականության սկզբունքը ավելի լրիվ Վ. Ի. Լենինը բացահայտել է «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» հայտնի հոդվածում։ Հոդվածի հիմնական թեզը ձևակերպված է հետևյալ կերպ. «Գրականությունը պետք է դառնա կուսակցական։ Ի հակակշիռ բուրժուական բարքերի, ի հակակշիռ բուրժուական ձեռնարկուական, շարլիական մամուլի, ի հակակշիռ բուրժուական գրական կարիերիզմի և ինդիվիդուալիզմի, «աղայական անարխիզմի» և շահամոլության,— սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջադրի կուսակցական գրականության սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և հնարավորին չափ ավելի լրիվ ու ավե-

3 Նույն տեղում, էջ 10։
4 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 684։

լի ամբողջական ձևով կենսագործի այնն»[5]։ Լենինը գտնում էր, որ գրականությունը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը, նպաստի բանվոր դասակարգի իդեալներին հասնելուն։ Սա քնավ չի նշանակում, որ գրականությունը կորցնում է իր առանձնահատկությունը, որ նրա դրսևորման շրջանակը նեղանում է մինչև կուսակցության գործնական խնդիրները։ Լենինը ընդունում էր, որ գրականությունը՝ որպես հասարակական գիտակցության ձև, ունի իր ֆունկցիաները, որ գեղարվեստական ստեղծագործության մեջ դրսևորվում են անհատական հակումներ, վարպետություն, որ այստեղ չի կարող լինել համահարթեցում։ Կուսակցականության հարցը Լենինը դիտում է նրա քաղաքական ու մեթոդաբանական ասպեկտներով, կուսակցականության սկզբունքը տարածելով հոգևոր ստեղծագործության բոլոր տեսակների վրա։ Վ. Ի. Լենինը իր աշխատություններում ոչ միայն զարգացրեց մարքսիզմի դրույթները մշակույթի դասակարգայնության և կուսակցականության վերաբերյալ, այլև տվեց գրականության և արվեստի բարդ երևույթների, գեղարվեստական ստեղծագործության պրոցեսների՝ կուսակցականության դիրքերից վերլուծության փայլուն օրինակներ։

Սակայն Լենինը մշակույթի խոշոր տեսաբան չէր միայն. նրան էր վիճակված գործնականում լուծելու նոր, սոցիալիստական մշակույթի հաստատման բարդ ու բազմազան խնդիրները։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1917—1923 թթ. ընթացքում Վ. Ի. Լենինը անձամբ ղեկավարում էր մեր երկրում կուլտուրական շինարարության ընթացքը։ Սովետական երկրի ղեկավարի այդ շրջանի կուսակցական ու պետական գործունեությունը հիմնավորապես ուսումնասիրված է, ստեղծվել են ոչ միայն մենագրություններ, այլև կենսագրական տարեգրություններ, որոնք հնարավորություն են տալիս օր-օրի հետևելու Սովետների երկրի կառավարության առաջին նախագահի գործունեությանը։ Կարելի է համարձակորեն պնդել, որ չի եղել մի օր, որպես զի Լենինը չզբաղվեր կուլտուրական շինարարության խնդիրներով։ Սովետական մշակույթի ականավոր կառուցողներից մեկի՝ Ա. Վ. Լունաչարսկու հիշողություններից հայտնի է, որ Զմեռային պալատի գրավման հենց հաջորդ օրը Լենինը Լունաչարսկու հետ ունեցած զրույցի ժամանակ կիսում էր իր մտքերը երկրում գրագարանային գործի վերակառուցման վերաբերյալ, այն հաշվով, որ դիրքը հասանելի դառնա աշխատավոր լայն զանգվածներին։

Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ՌԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի Քաղբյուրոյի և Ժողովրդական կոմիսարների խորհրդի նիստերին քննարկվում և վճռվում էին մշակույթի ամենաբազմազան հարցեր՝ լուսավորության պետական մարմինների կազմակերպումը, բուրժուական մամուլի վերացումը և սովետական մամուլի ստեղծումը, գիտության մոբիլիզացումը սոցիալիստական շինարարությանը ծառայելու նպատակով, բարձրագույն դպրոցի ռեֆորմը, հին մտավորականության ներգրավումը սովետական իշխանության կողմը և նոր մտավորականության ստեղծումը, մոնումենտալ պրոպագանդան, թատրոնների վիճակը և այլն։ Փաստերը վկայում են, որ չկար երկրի կուլտուրական կյանքի քիչ թե շատ նշանակալից մի բնագավառ, որը չլիներ Վլադիմիր Իլյիչի տեսադաշտում։ Ընդսմին Լենինը հանդես էր գալիս որպես նախաձեռնող, մասնակցում էր հարցերի մշակմանը և քննարկմանը, գրում էր, խմբա-

5 Նույն տեղում, հատ. 12, էջ 120—121։

գրում և, վերջապես, ստորագրում կուլտուրական շինարարության խնդիրների վերաբերյալ դեկրետների ու որոշումների մեծ մասը։ Լենինին հատուկ հետաքրքրողականությունը, համոզելու ուժը, անցկացվող միջոցառումների վերջնական նպատակները բացատրելու կարողությունը՝ միացած տակտի, համբերողության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վճռականության հետ, հնարավորություն տվեցին սովետական մշակույթի հաստատման ամենադժվար տարիներին, երբ ժողովուրդը և երկիրը գնում էին նոր ճանապարհներով, խուսափել սխալներից ու ծայրահեղություններից, որոնք հնարավոր են սման մի նոր գործում։ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավար մասնակցությունը կուլտուրական շինարարությանը, սոցիալիստական մշակույթի ստեղծման գործում նրա անգնահատելի ծառայությունները Մ. Գորկուն հիմք են տվել Լենինին համարելու «նոր, սոցիալիստական մշակույթի հիմնադիր»։

Հոդվածի շրջանակներում դժվար է լուսաբանել կուլտուրական շինարարության տեսական հարցերի մշակման և գործնական ղեկավարման բնագավառում Վ. Ի. Լենինի գործունեության բոլոր կողմերը։ Այս պատճառով մենք կսահմանափակվենք միայն երեք հարցի դիտարկմամբ՝ կուլտուրական հեղափոխության տեղը սոցիալիստական շինարարության լենինյան պլանում. կուլտուրայի զարգացման ղեկավարումը կուսակցության կողմից. կուլտուրական ժառանգության պրոբլեմը։

Կուլտուրական հեղափոխության ուսմունքը հանդիսանում է մեր երկրում սոցիալիզմի կառուցման Լենինի մշակած պլանի բաղկացուցիչ մասը։ Մերժելով և ծաղրելով մենշևիկյան դատողություններն այն մասին, որ Ռուսաստանի կուլտուրական մակարդակը թույլ չի տալիս լրջորեն խոսելու այստեղ սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին, Լենինը գտնում էր, որ սոցիալիզմի կառուցման ընթացքում պետք է վճռվեն հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր վերակառուցման խնդիրներն ամբողջությամբ, համատեղ։ «Մեր հակառակորդները մեզ շատ անգամ ասել են,— գրել է Լենինը «Կոոպերացիայի մասին» հոդվածում,— թե մենք ձեռնարկում ենք ոչ-բավականաչափ կուլտուրական երկրում սոցիալիզմ պատվաստելու ցնորամիտ գործին։ Բայց նրանք սխալվեցին այն բանում, որ մենք սկսեցինք ոչ այն ծայրից, ինչպես ենթադրվում էր ըստ (ամեն տեսակ պեդանտների) թեորիայի, և որ մեզանում քաղաքական ու սոցիալական հեղաշրջումը նախակարապետ հանդիսացավ այն կուլտուրական հեղաշրջման, այն կուլտուրական հեղափոխության, որի հանդեպ մենք, այնուամենայնիվ, կանգնած ենք այժմ երես առ երես»[6]։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծում էր երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական և կուլտուրական խնդիրների փոխադարձ պայմանավորվածությունը։ «Սովետական իշխանության հերթական խնդիրները» ծրագրային հոդվածում Լենինը մատնանշում էր, որ կապիտալիզմի նկատմամբ լիակատար հաղթանակ ձեռք բերելու համար անհրաժեշտ է հասնել աշխատանքի բարձրացուցչ արտադրողականության, և հարցի լուծման առաջին պայման նա համարում էր բնակչության ընդհանուր կրթական և կուլտուրական մակարդակի բարձրացումը[7]։

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 565։
7 Տե՛ս նույն տեղում, հատ. 27, էջ 307։

Կուլտուրական հեղափոխության կարևորագույն նպատակներից մեկը Վ. Ի. Լենինը համարում էր մշակույթի դեմոկրատացումը, աշխատավոր զանգվածների համար գիտելիքների, կրթության ու մշակույթի իրական մատչելիության ապահովումը, ժողովրդից կուլտուրայի նախին խորթության վերացումը։ Այս խնդիրը Լենինի կողմից ձևակերպվել է 1918 թ., երբ սովետական երիտասարդ հանրապետությունը պետք է հոգ տաներ ոչ այնքան կուլտուրական վերակառուցումների, որքան այն մասին, թե ինչպես դիմակայի հակահեղափոխական ուժերի և ինտերվենցիայի ճնշմանը։ Այդ ծանր օրերին Լենինը գրում էր. «Առաջ ամբողջ մարդկային խելքը, նրա ամբողջ հանճարն ստեղծագործում էր միմիայն նրա համար, որպեսզի մի կարգ մարդկանց տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին զրկի ամենաանհրաժեշտից՝ լուսավորությունից ու զարգացումից։ Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն, և այսուհետև մարդկանց խելքն ու հանճարը էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[8]։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը հետևողականորեն իրականացնում էին լենինյան կանխագծումները. մշակույթի դեմոկրատացումը, աշխատավոր լայն զանգվածներին մշակույթին հաղորդակից դարձնելը հնարավոր եղավ իրականացնել համատարած անգրագիտության վերացմամբ, լուսավորության սովետական սիստեմի ստեղծմամբ, պարտադիր ուսուցման իրականացմամբ, դեպի բարձրագույն կրթությունը աշխատավորների մուտքի ապահովմամբ, զանգվածների քաղաքական լուսավորությամբ։

Կուլտուրական հեղափոխությունը հետապնդում էր մարդկանց հասարակական գիտակցության արմատական վերափոխման, նոր, սոցիալիստական գաղափարախոսության հաստատման նպատակ։ Այդ գաղափարախոսության հիմքն է հանդիսանում մարքսիստական աշխարհայացքը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ պրոլետարական մշակույթը, որը հենվում է մարքսիզմի գաղափարախոսության վրա, ներառնում է իր մեջ ազգային մշակույթների հետևողականորեն դեմոկրատական ու սոցիալիստական տարրերը, կդառնա իսկապես ինտերնացիոնալ մշակույթ։ Սովետական մշակույթը պետք է խաղա իր դերը նոր մարդու դաստիարակման, կոմունիստական գաղափարախոսության հաստատման գործում։

Մշակելով կուլտուրական հեղափոխության տեսությունը, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ նրա հաջող իրականացման գրավականը աշխատավոր ամենալայն զանգվածների շահագրգռվածությունն է, նրանց մասնակցությունը սովետական իշխանության կուլտուրական բոլոր ձեռնարկումներին։ Դեռ մինչև սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Վ. Ի. Լենինը կանխատեսում էր, որ ժողովրդական զանգվածները, որոնք կապիտալիզմի օրոք զրկված էին գիտելիքների ձեռքբերման և մշակույթի հետ հաղորդակցվելու հնարավորությունից, սոցիալիստական հեղափոխության բերած ազատության և հավասարության պայմաններում ամբողջ ուժով կձգտեն դեպի կուլտուրան։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ հեղափոխությունը պետք է մասսաներին կոչի «հիմնավոր պատմական ստեղծագործության», դուրս բերի նրանց ահավոր հետամնացությունից, անհավատալի խավարից, պետք է արթնացնի հազարավոր

8 Նույն տեղում, հատ. 26, էջ 589—590։

ճնշված մարդկանց գիտակցությունը։ «Ներքևից»,— գրել է Վ. Ի. Լենինը արդեն հեղափոխությունից հետո,— այսինքն՝ աշխատավորների այն մասսայից, որ կապիտալիզմը հեռու էր պահում—թե՛ բացահայտ կերպով, բռնությամբ և թե՛ կեղծավորության ու խաբերայության միջոցներով—հեռու էր պահում կրթությունից, հզոր վերելք է տեղի ունենում դեպի լույսն ու գիտությունը։ Մենք իրավունք ունենք պարծենալու, որ օգնում ենք այդ վերելքին և ծառայում ենք նրան»[9]։ Մեր երկրում կուլտուրական հեղափոխության պատմական փորձը հաստատեց Վ. Ի. Լենինի կանխատեսումը կուլտուրական հեղափոխության իսկական ժողովրդական բնույթի մասին։ Սա ամենից առաջ նշանակում է, որ կուլտուրական հեղափոխությունը իրականացավ ժողովրդական ամենալայն շերտերի շահերին համապատասխան, այն բանի համար, որպեսզի աշխատավորներին տրվեն «իրականում կուլտուրայի, քաղաքակրթության և դեմոկրատիայի բարիքներից օգտվելու»[10] բոլոր հնարավորությունները։ Կուլտուրական հեղափոխության ժողովրդական բնույթը դրսևորվեց նաև նրանում, որ այն իրականացրեց հենց ինքը՝ ժողովուրդը։ Մեր երկրի բազմազգ ժողովուրդները կուսակցության և պետության կուլտուրական քաղաքականության մեջ տեսան մարմնավորումը իրենց լավագույն երազանքների, կենսագործումը այն իդեալների, հանուն որոնց եկան Ռուսաստանի ժողովուրդների հիանալի զավակները՝ մեծ լուսավորիչներ, ազգային ժողովրդական մշակույթի ստեղծման քարոզիչներ Նիկոլայ Չերնիշևսկին և Տարաս Շևչենկոն, Խաչատուր Աբովյանը և Միրզա Ֆաթալի Ախունդովը, Յան Ռայնիսը և Կոստա Խետագուրովը։

Սոցիալիստական շինարարության հաջողության պայմանը Վ. Ի. Լենինը համարում էր կուսակցական ղեկավարությունը։ Այս դրույթը նա տարածում էր նաև կուլտուրական շինարարության վրա։ Հանդես գալով կուլտուրական շինարարության բնագավառում դեկրետավորման մեթոդների դեմ, Լենինը միաժամանակ ընդգծում էր կուլտուրական հեղափոխությունը ղեկավարելու անհրաժեշտությունը, ընդսմին շեշտելով կուսակցության վճռական դերը այդ գործում։ Խոսելով ժողովրդական զանգվածների հսկայական ակտիվության մասին, որոնք սոցիալիստական հեղափոխությունից հետո ձգվեցին դեպի գիտելիքները ու լուսավորությունը, Վ. Ի. Լենինը մատնանշում էր. «Մենք պետք է պլանաչափորեն ղեկավարենք այդ պրոցեսը և ձևավորենք նրա արդյունքները»[11]։ Վ. Ի. Լենինը վճռականորեն հանդես էր գալիս սոցիալիզմի օրոք մշակույթի տարերային և անկոնտրոլ զարգացման վերաբերյալ անարխիստական լոզունգի դեմ, որի կողմնակիցները արտահայտվում էին մշակույթի գործում «չեզոքության» օգտին՝ ինչպես սոցիալիստական հեղափոխությունից առաջ, այնպես էլ նրա հաղթանակից հետո։ Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ հոգևոր մշակույթի բնագավառում ղեկավարությունը դա ամենից առաջ կուսակցության կողմից գաղափարական ղեկավարության իրականացումն է, կոմունիստական գաղափարախոսության հաստատումը, պայքարը բուրժուական աշխարհայացքի դեմ։ Սովետական իշխանության առաջին տարիներին, երբ Պրոլետկուլտի գաղափարախոսները հանդես էին գալիս կուլտուրական շինարարության մեջ սովետական պետության ղեկավար դերի դեմ, Վ. Ի. Լենինը վճռականապես պաշտպանում էր կուլտուրական հեղափոխության ղեկավար-

9 Նույն տեղում, հատ. 32, էջ 146—147։
10 Նույն տեղում, հատ. 29, էջ 118։
11 Տե՛ս К. Цеткин, Воспоминания о Ленине, М., 1955, էջ 13։

ման խիստ կենտրոնացման սկզբունքը, ընդգծելով, որ կուլտուրական շինարարության խնդիրները պրոլետարական դիկտատուրայի խնդիրների անբաժանելի մասն են կազմում։

Իրագործելով լենինյան ցուցումները, կուսակցությունը և սովետական պետությունը կուլտուրական շինարարությանը հաղորդեցին պլանավորված բնույթ, որոշեցին խնդիրների լուծման հերթականությունը, հոգ տարան մշակույթի նյութական բազայի ստեղծման և զարգացման, գիտության և մշակույթի նվաճումները սոցիալիզմի կառուցման շահերին ծառայեցնելու մասին։

Կուլտուրական շինարարության հարցերը մշտապես եղել են կոմունիստական կուսակցության և սովետական պետության ուշադրության կենտրոնում։ Կուլտուրական շինարարության այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք էին մասսայական անգրագիտության վերացումը, կրթության սովետական սիստեմի ստեղծումը և զարգացումը, մասսաների քաղաքական լուսավորությունը, ժողովրդական տնտեսության համար մասնագիտական կադրերի ստեղծումը և այլն, բազմիցս քննարկվել են կուսակցության համագումարներում ու կոնֆերանսներում, Կենտրոնական կոմիտեի պլենումներում, երկրի բարձրագույն օրենսդիր մարմիններում։ 1917—1923 թթ. ընթացքում Վ. Ի. Լենինը տասնյակ անգամներ ելույթ է ունեցել կուլտուրական շինարարության խնդիրների մասին՝ դպրոցի և քաղուսվարչության աշխատողների համառուսաստանյան խորհրդակցություններում, կոմերիտմիության համագումարում, լուսաբանել է այդ հարցերը իր հոդվածներում։ Հենվելով Վ. Ի. Լենինի ցուցումների վրա, կուսակցությունը մշտապես հաշվի է առել մշակույթի տարբեր բնագավառների առանձնահատկությունները, ձգտել ամեն կերպ նպաստել մասսաների ստեղծագործական նախաձեռնության ավելի լրիվ բացահայտմանը հոգևոր կյանքի ասպարեզում։ Մեր երկրում կուլտուրական շինարարության փորձը ցույց տվեց, որ կոմունիստական կուսակցության և սովետական պետության կողմից մշակույթի զարգացման ղեկավարումը՝ զուգակցված ժողովրդական մասսաների՝ մշակույթի կերտողների, ստեղծագործական ակտիվության հետ, հանդիսացավ կուլտուրական հեղափոխության խնդիրների լուծման պարտադիր պայմանը։

Մշակույթի մասին լենինյան ուսմունքի մեջ կարևոր տեղ է գրավում կուլտուրական ժառանգության, մշակույթի զարգացման մեջ հաջորդականության հարցը։ Հայտնի է, որ դեռ սոցիալիստական հեղափոխությունից առաջ սոցիալ-դեմոկրատիայի որոշ տեսաբաններ առաջ էին քաշում այն տեսակետը, թե պրոլետարիատը պետք է մշակի իր սեփական մշակույթը, որը հակադրվում է անցյալի մշակույթին։ Այս դրույթը հետագայում յուրացրին Պրոլետկուլտի գործիչները, որոնք Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո սկսեցին պնդել, որ պրոլետարական «հատուկ» մշակույթի ստեղծումը պետք է ընթանա նախորդ կուլտուրայից անկախ, որը, իբր, պրոլետարիատի կողմից օգտագործվելու արժանի ոչինչ չի ստեղծել։ Պրոլետկուլտի գործիչներին բնորոշ էր նիհիլիստական վերաբերմունքը անցյալի մշակույթի նկատմամբ, ազգային մշակույթների նվաճումների ժխտումը։

Կուլտուրական ժառանգության խնդրին Վ. Ի. Լենինը մոտենում էր անհամեմատ լայն, քննարկելով այն ոչ միայն նոր մշակույթի ստեղծման, այլև ամբողջ սոցիալիստական շինարարության տեսակետից։ Վ. Ի. Լենինը դրտնում էր, որ սոցիալիստական մշակույթի ստեղծման ընթացքում պրոլետա-

բիատը կարող է և պետք է օգտագործի անցյալի դեմոկրատական մշակույթի նվաճումները։ Ավելին, պրոլետարիատը չպետք է ժխտի և մերժի բուրժուական կուլտուրայի օբյեկտիվ նվաճումները, որոնք նոր պայմաններում կարող են ծառայել աշխատավոր ժողովրդին։ Անցյալի մշակույթի նկատմամբ նման վերաբերմունքը արտահայտված է Վ. Ի. Լենինի հետևյալ խոսքերում. «...Ճղմված կապիտալիզմից չես կշտանա։ Հարկավոր է վերցնել ամբողջ կուլտուրան, որ կապիտալիզմը թողել է, և նրանից սոցիալիզմ կառուցել։ Հարկավոր է վերցնել ամբողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր գիտելիքները, արվեստը։ Առանց այս բանի մենք չենք կարող կոմունիստական հասարակության կյանքը կառուցել»[12]։ Վ. Ի. Լենինը վճռական պայքար էր մղում մարդկության մինչսոցիալիստական անցյալի նկատմամբ գռեհիկ, ժխտողական վերաբերմունքի դեմ։ Նա գտնում էր, որ մարդկությունը իր գոյության ամբողջ ընթացքում ստեղծել է հարուստ քաղաքակրթություն, կուտակել է հսկայական փորձ կյանքի բոլոր բնագավառներում, և սոցիալիզմը չի կարող զանց առնել դրանք։ Ընդհակառակը, ուսուցանում էր Լենինը, սոցիալիզմը հանդիսանում է նախորդ ողջ սերունդների ջանքերով ստեղծվածի օրինական ժառանգորդը։ «Մենք չենք պատկերացնում այլ սոցիալիզմ,— գրել է Լենինը,— քան այն, որը հիմնված է խոշոր կապիտալիստական կուլտուրայի ձեռք բերած բոլոր դասերի վրա»[13]։

Սոցիալիզմը չի խախտում մարդկային հասարակության զարգացման մեջ հաջորդականությունը, և, հետևապես, սոցիալիզմի մշակույթը հենվում է անցյալի մշակույթի լավագույն նվաճումների վրա։ Պահանջելով ճիշտ կերպով ըմբռնել կուլտուրական շինարարության խնդիրները, Վ. Ի. Լենինը կոմերիտմիության III համագումարում արտասանած իր նշանավոր ճառում ասել է. «Առանց պարզ ըմբռնելու այն, որ միայն մարդկային ամբողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրան ճշգրիտ գիտենալով, միայն նրա վերամշակմամբ կարելի է կառուցել պրոլետարական կուլտուրան—առանց այդպիսի ըմբռնման մենք այդ խնդիրը լուծել չենք կարող։ Պրոլետարական կուլտուրան մի ինչ-որ անհայտ տեղից դուրս պրծած, իրենց պրոլետարական կուլտուրայի մասնագետներ համարող մարդկանց հնարած բան չէ։ Այդ բոլորը ամբողջապես անհեթեթություն է։ Պրոլետարական կուլտուրան պետք է լինի օրինաչափ զարգացումը գիտելիքների այն պաշարի, որը մշակել է մարդկությունը կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական հասարակության ճնշման տակ»[14]։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ կուսակցությունը պետք է հետևողական ու վճռական պայքար մղի կուլտուրական շինարարության ամեն տեսակի աղավաղումների դեմ, բացատրի մասսաներին մշակույթի հարցերին մարքսիստական մոտեցման էությունը։ Իր ամբողջ գործունեությամբ Վ. Ի. Լենինը դրա լավագույն օրինակն էր տալիս։ Հայտնի է, թե ինչպիսի վճռականությամբ էր Վ. Ի. Լենինը պաշտպանում բուրժուական մասնագետներին, հին մտավորականությանը սոցիալիստական շինարարության շահերի համար օգտագործելու անհրաժեշտությունը, այն պայմաններում, երբ այս հարցում որոշակի

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 66—67։
13 Նույն տեղում, հատ. 27, էջ 377։
14 Նույն տեղում, հատ. 31, էջ 348—349։

տատանումներ ցուցաբերեցին նույնիսկ կուսակցության որոշ ղեկավար գործիչներ։ Պայքար ոչ թե մտավորականության դեմ, այլ մտավորականության համար՝ այսպիսին էր Վ. Ի. Լենինի մոտեցման էությունը այս խնդրում։ Խոսելով սոցիալիստական շինարարության մեջ հին մտավորականության ներգրավման մասին, Վ. Ի. Լենինը ասում էր իր ընդդիմախոսներին. «Իսկ նրանց գիտելիքները, նրանց փորձն ու աշխատանքը մեզ պետք են, առանց նրանց անհնարին է իրականում ձեռք բերել այն կուլտուրան, որն ստեղծել են հին հասարակական հարաբերությունները, և մնացել է որպես սոցիալիզմի նյութական բազիս»[15]։

Սոցիալիստական մշակույթը սկզբից ևեթ ձևավորվում էր որպես բազմազգ մշակույթ։ Նա ներառնում էր իր մեջ այն ամեն լավագույնը, որ ստեղծել էին ազգային մշակույթները նախորդ ժամանակաշրջանում։ Այդ յուրացումը կրում էր ստեղծագործական բնույթ։ Ազատասիրություն, հումանիզմ, ժողովրդայնության՝ այս և համամարդկային մշակույթի մյուս առաջադիմական առանձնահատկությունները հատուկ են անցյալի ազգային մշակույթների լավագույն ներկայացուցիչներին։ Իրենց ստեղծագործություններում նրանք արտահայտել են ժողովրդի լավագույն իղձերը, և այդ ձգտումները մոտ ու հասկանալի էին բոլոր մարդկանց։ Ազգային մշակույթների նվաճումների մնայուն արժեքը կայանում է հենց նրանում, որ լավագույն ստեղծագործությունները ապրում են հավերժ, ծառայում բազում սերունդների։ Դրանում նույնպես արտահայտվում է հաջորդականությունը բազմազգ սոցիալիստական մշակույթի ստեղծման գործում։ Պատահական չէ, ուրեմն, որ նոր, սովետական մշակույթի կոչն էին անցնում բոլոր այն գործիչները, ովքեր սոցիալիզմի մեջ տեսնում էին իրենց իդեալների հաղթանակը։ Սոցիալիստական բազմազգ մշակույթի ձևավորման ակունքների մոտ կանգնած էին գրականության և արվեստի արդեն ճանաչված վարպետներ՝ գրողներ Ալեքսանդր Բլոկը և Պավլո Տիչինան, նկարիչներ Սերգեյ Կոնենկովը և Մարտիրոս Սարյանը, թատերական գործիչներ Կոնստանտին Ստանիսլավսկին ու Եվգենի Վախթանգովը և շատ ուրիշներ։

Վ. Ի. Լենինը չսպառանց զգույշ և նրբանկատ էր մշակույթների ազգային գծերի պահպանման և զարգացման հարցերում։ Մատնացույց անելով, որ հասարակության կյանքի բոլոր կողմերի, այդ թվում և հոգևոր գործունեության, ինտերնացիոնալացման պրոցեսը սկսել է դեռևս կապիտալիզմի օրոք և խորանում է սոցիալիզմի ժամանակ, Վ. Ի. Լենինը միաժամանակ գտնում էր, որ «...ժողովուրդների ու երկրների միջև... ազգային ու պետական տարբերությունները... պրոլետարիատի դիկտատուրան նույնիսկ համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ...»[16], որ ինտերնացիոնալ մշակույթը բնավ էլ չի հանդիսանում ապազգային։

Լենինյան այս դրույթը չի կորցրել իր նշանակությունը նաև արդի դարաշրջանում, երբ, ինչպես հայտնի է, հոգևոր կյանքի ինտերնացիոնալացումը հասել է բարձր աստիճանի, երբ ավելի է ուժեղացել սովետական ազգային մշակույթների ծաղկման և փոխադարձ մերձեցման պրոցեսը։ Սովե-

15 Նույն տեղում, հատ. 27, էջ 364—365։
16 Նույն տեղում, հատ. 31, էջ 97—98։

տական ժողովուրդների կուլտուրական փոխադարձ կապերի փորձը վկայում է, որ մշակույթների մերձեցումը հանդիսանում է յուրաքանչյուր ազգային մշակույթի ծաղկման պայմաններից մեկը։ Ներառնելով գիտության, գրականության, արվեստի և հոգևոր ստեղծագործության մյուս բնագավառների նորը, առաջավորը՝ ազգային մշակույթը հարստացնում է իր բովանդակությունը, բնավ չկորցնելով ազգային առանձնահատկությունները։ Կոմունիստական կուսակցությունը, հավատարիմ լենինյան պատգամներին, այդ հարցին մոտենում է խիստ գիտականորեն, թույլ չտալով շեղումներ ոչ այս, ոչ այլ կողմ։ «Խոսելով մարդկանց պատմական նոր ընդհանրության մասին,— նշում է Լ. Ի. Բրեժնևը,— մենք ամենևին էլ նկատի չենք ունենում, թե մեզ մոտ արդեն անհետացել են ազգային տարբերությունները, կամ, մանավանդ, տեղի է ունեցել ազգերի ձուլում։ Սովետական Միությունում ապրող բոլոր ազգերն ու ազգությունները պահպանում են իրենց յուրահատկությունները, ազգային բնավորության գծերը, լեզուն, իրենց լավագույն տրադիցիաները։ Նրանք բոլոր հնարավորություններն ունեն հասնելու իրենց ազգային կուլտուրաների էլ ավելի մեծ ծաղկման»[17]։

Վլադիմիր Իլյիչ Լենինը հսկայական ներդրում է կատարել մշակույթի մասին մարքսիստական ուսմունքի զարգացման գործում։ Ներկայումս այդ ուսմունքը անհնար է պատկերացնել առանց լենինյան դրույթների, որոնք ստուգվել և հաստատվել են ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների կուլտուրական շինարարության փորձով։ Կուլտուրական հեղափոխության՝ Վ. Ի. Լենինի ձևակերպած խնդիրները, սոցիալիստական մշակույթի ստեղծման նրա նշած ուղիները տեսական ու գործնական մնայուն նշանակություն ունեն սոցիալիստական զարգացման ուղին մտած բոլոր երկրների և ժողովուրդների համար։

---

17 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հատ. 4, էջ 321։